

Հայաստանի այս պատուհասին վրայ աւելորդ է երկար գրել, ժամանակակից պատմիչի մը այս խօսքերը բաւական կը համարինք. «Եկեղեցիք քանդեալ եւ քայքայեալ, քահանայք խողխողեալ, տիկնայք փափկասունք որոց ոչ էր առեալ զփորձ նեղութեան գանալից—թէր թշնամանեալ եւ քարշեալք ի հրապարակս՝ զկականումն ողբոյ բարձրացուցանէին վասն յեղակարծումն օրհասին Այլ եւ աշխարհախումբ բազմութենէն ըմբռնեալք ուստերօք եւ դրստերօք ի նոյն վտանգս, եաճախէին զհառաչանս եւ զհեծութիւնս, զի ոչ գիտէին զօ՞ր առաւել ողբասցեն, զխողխողեա՞լս եթէ զկենդանւոյն ազատեալս զուստերս եւ զդստերս օտարացեալս ի Զրիստոս...»:

Իսկ Թեոդորոս Կոզմովտի բարձանց վրայէն դառնացեալ կը նայեր ոչ միայն եղած աւերակաց վրայ, այլեւ այն ապագայ դարերուն վրայ, որ դեռ աւերակներ պիտի բերէին եւ անապատը պիտի ընդարձակէին, վասնզի յայտնի երկու դաւաճանք այս դժբախտութեանց պատճառ կ'երեւէին, եւ գաղտնի ուրիշներ ստուերներու մէջ կային, որ չէին երեւեր: Ո՛ր էին Մուշեղ եւ Հմայեալ Մամիկոնեանք, ինչո՞ւ չէին շարժեալ, երբ թշնամին իրենց երկիրը կը մտներ: Իսկ նոքա, որ եռանդուն խոստմունքներ ըրած էին՝ իշխանք Սպերացուոց, Բագրատունեաց, Մանանաղեաց, Դարանաղեաց եւ Եկեղեաց գաւառին, իշխանք Վանանդայ եւ Դիմաքսենից, ոչ ուրեք չէին երեւեր. նոյն Արարատայ կողման ազատախումբը՝ Առանեանք, Վարաժնունիք, Գնթունիք եւ Սպանդունիք հազիւ թէ ականմայ եւ առ երեւոյթս կը շարժէին: Վրացիք, Աղուանք եւ Սիւնիք միայն հաւատարիմ իրենց միաբանութեան գունդագունդ կը հասնէին, բայց հարուածն արդէն եղած էր: Արաբական հրաքուխի դժոխային գետը երկրին մէկ ծայրէն մինչեւ մայրաքաղաքը իր ապականիչ կրակով տոչորել էր:

Կոզմովտի լեռանց պափարներուն մէջ՝ ծեր բարեկամ մը կար միայն մենացեալ, որ հայոց էն բարձր աթոռին վրայէն կամովին իջած զրպարտութեանց եւ քսութեանց պատճառաւ կ'ողբար առանձնութեան մէջ իւր ազգին վրայ, եւ նա միայն կը հասկնար Թեոդորոսի հառաչանաց մորմոքը:

Զրիստափոր կաթողիկոսն էր սա, որ ոչ ներկային եւ ոչ ապագային առջեւ արդարանալ չէր խնդրած, այլ մաքուր՝ իւր աստծոյն եւ խղճին առջեւ կը սպասեր ժամուն ելնելու աղետալից կ'եանքէն, որ իրեն կաթողիկոսական պսակը փուչերով էր կազմել: Այս բարեկամին գնաց Թեոդորոս, ո՛չ միխթարութիւն դտնելու, այլ իմանալով Եզր կաթողիկոսին մահը, խորհուրդ հարցնելու թէ ո՞վ կարելի էր ընտրել, եւ արժանաւորը: Զրիստափոր խորհուրդ տուաւ Տայոց եպիսկոպոս Ներսէսն ընտրել, որ աշխարհիս ամեն փորձերէն